600.0008.22.02.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2001 թվականի №8
ք. Երևան

«ԱԳԱՐԱԿԻ ՀԷԿ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԵՎ «ՀԻԴՐՈԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ-Ի «ԵՐԵՎԱՆՅԱՆ ԼՃԻ ՄԵՐՁՊԱՏՎԱՐԱՅԻՆ ՀԷԿ»-Ի ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑ ԱՌԱՔՄԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՔՎՈՏԱՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, հաշվի առնելով «Ագարակի ՀԷԿ» ԱԿ-ի ու «Հիդրոէներգիա» ՍՊԸ-ի «Երևանյան լճի մերձպատվարային ՀԷԿ»-ի էլեկտրաէներգիայի արտադրության 2000 թվականի կանխատեսումների հիմքում ընկած ջրահոսքի մեծության նախագծային գնահատականներից շեղումները և ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի մարտի 10-ի №6 որոշման 2.3 կետը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է .**

1. «Ագարակի ՀԷԿ» արտադրական կոոպերատիվի էլեկտրաէներգիայի ազգային ցանց առաքման 2000 թվականի քվոտան ավելացնել 32 հազար կՎտժ-ով:
2. «Հիդրոէներգիա» ՍՊԸ-ի «Երևանյան լճի մերձպատվարային ՀԷԿ»-ի էլեկտրաէներգիայի ազգային ցանց առաքման 2000 թվականի քվոտան ավելացնել 246 հազար կՎտժ-ով:
3. Նշված ՀԷԿ-երի քվոտան ավելացնել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի մարտի 10-ի «Էլեկտրաէներգիայի ազգային ցանց էլեկտրական էներգիայի առաքման 2000 թվականի քվոտաների սահմանման մասին» №6 որոշմամբ սահմանված ընդհանուր քվոտայի շրջանակում:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ. ՄՈՎՍԵՍՅԱՆ**